01/10.1/1754-09

2009-03-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. 1-ին հոդվածի՝

1) 5-րդ կետով սահմանված դրույթը կարգավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N 655-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետով։ Տաքսամոտորային փոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցների համար նախագծով առաջարկվող առավելագույն 15 տարի ժամկետի սահմանումը կառաջացնի էժան և տեխնիկապես ոչ բավարար վիճակում գտնվող տրանսպորտային միջոցների հոսք դեպի Հայաստանի Հանրապետություն, որի արդյունքում կունենանք տեխնիկապես մաշված տաքսամոտորային պարկ։

Հայաստանի Հանրապետության կառավարության՝ նշված որոշմամբ նախատեսված սահմանափակումները՝ տաքսամոտորային փոխադրումներում 10 և ավելի պակաս տարիք ունեցող ավտոմոբիլների ներգրավումը, սահմանվել է՝ հաշվի առնելով ուղևորների սպասարկման անվտանգությունը, սպառողների իրավունքների պաշտպանությունը, ծառայությունների որակի բարձրացումը և միջազգային փորձը.

2) 6-րդ կետով սահմանված դրույթը կարգավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N 655-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով։ Նպատակահարմար չենք գտնում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցներին հիմնական

համարանիշեր հատկացնելը։ Հարկ ենք համարում նշել, որ հանրապետությունում ներկայումս գործում են լիցենզավորված՝ մարդատար-տաքսի ծառայություն իրականացնող 532 կազմակերպություն և 52 անհատ, ընդգրկված է, ընդհանուր առմամբ, դեղին հիմնագույնի համարանիշերով 5825 տրանսպորտային միջոց, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել 107.7 մլն դրամ։

Ինչ վերաբերում է հիմնավորման մեջ նշված մարդատար-տաքսի ավտոմոբիլներով Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման հնարավորությանը, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը ներկայումս Վրաստանի համապատասխան մարմինների հետ բանակցություններ է վարում դեղին հիմնագույնի համարանիշերով թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլների՝ Վրաստան մուտքը թույլատրելու համար.

3) 7-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, ավտոմոբիլի դիմապակու վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված տեղում պետք է փակցվի տեխնիկական զննության կտրոնը։ Դիմապակու վրա այլ փաստաթղթեր փակցնելը կսահմանափակի վարորդի տեսադաշտը և չի ապահովի անհրաժեշտ անվտանգությունը։

2. Իրավական առումով 1-ին հոդվածում՝

1) առաջին պարբերությունում «ՀՕ-233» համարն անհրաժեշտ է փոխարինել «ՀՕ-233-Ն» համարով, իսկ «կետերով» բառը՝ «մասերով» բառով.

2) լրացվող 7-րդ մասում հստակեցման կարիք ունի, թե ինչ հատուկ կտրոնի մասին է խոսքը։ Ըստ նախագծին կից հիմնավորման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կտրամադրվի դիմապակուն փակցվող հատուկ կտրոն։ Այդ առումով լրացվող մասում անհրաժեշտ է կատարել համապատասխան նշում։

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար Գուրգեն Սարգսյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-531-10.02.2009-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (5 դեկտեմբերի 2006 թվականի, ՀՕ-233, այսուհետ՝ օրենք) 17-րդ հոդվածը լրացնել 5, 6 եւ 7 կետերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

5. Տաքսամոտորային փոխադրումներում կարող են ներգրավվել միայն տասնհինգ եւ ավելի փոքր տարիք ունեցող ավտոմոբիլներ։

6. Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումների համար նախատեսված տրասպորտային միջոցներին հատկացվում են հիմնական համարանիշներ։

7. Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումներ իրականացնող լիցենզավորված անձանց յուրաքանչյուր ավտոմոբիլի համար տրվում է դիմապակու փակցման հատուկ կտրոն։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծի ընդունումը պայմանավորված է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումներ իրականացնող շուրջ 3000 աշխատատեղերի պահպանման անհրաժեշտությամբ եւ ձեւական վարչարարությամբ, եկամտաստեղծ գործունեությունը չսահմանափակելու հիմնարար սկզբունքի ամբողջական իրականացմամբ։ Հայաստանի Հանրապետության փոքր եւ միջին գործարարության ոլորտում անհրաժեշտություն է առաջացել վերականգնել տնտեսական մրցակցության հավասարության սկզբունքը, մասնավորապես՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով նախատեսված Հայաստանի Հանրապետության սահմաներից դուրս ուղեւորափոխադրումների ծառայությունների մատուցման հնարավորությունը։ Նախագիծը նպատակ ունի կարգավորել մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումներ իրականացնող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց լիցենզավորման կարգը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կտրամադրվի դիմապակու փակցման հատուկ կտրոն։

Օրինագծի ընդունումը էապես կնպաստի նշված գործունեություն իրականացնող անձանց եւ նրանց ընտանիքների սոցիալական ապահովման խնդիրների լուծմանը՝ ներկա ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում։